



Ս. Էջմիածին, Ս. Ծնունդ 1986

Ամեն. Տ. Եղիշե Արեւաթ. Տէրտէրեան,
Պատրիարք Հայոց,
Երուսաղէմ

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»

Սիրեցի Եղբայր Մեր,

Մեր սիրջը ուրախութեամբ լի, Սուրբ Էջմիածնից այսօր բերում ենք Ձերդ Ամենապատուութեան լոյս աւեսխը Սուրբ Ծննդեան Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի, Մեր ամենաբարի մաղթանքներով հանդերձ:

Այսօր թո՛ւմ է անմահ, վստմի մեր հոգիները, մեր կեանքը վերսին լուսաւորում են վերանորոգուելու յոյսով եւ փրկութեան տեսիլով: Այո, Քրիստոս մեր նորոգումն է եւ մեր յոյսը փրկութեան: Երկրային մեր կեանքում մեզ առաջնորդող լոյսն է Նա եւ մեր բարի գործերի ստուգութիւնը: Իսկ պատմութեան մէջ, իր Աւետարանով, Քրիստոս «արեգակ է արդարութեան» եւ «իշխան խաղաղութեան»:

Նոր ծնունդ Աստուածորդու մսուրի առաջ աղօթում ենք, որ մարդիկ ապրեն իրենց ժամանակը, գործեն՝ երկնային կեանքի տեսիլով, եւ ազգեր ու պետութիւններ առաջնորդուեն քրիստոսաւանդ խաղաղարար ոգով եւ արդարութեան լոյսով: Եղիցի, եղիցի:

Սուրբ Ծննդեան աւեսխով այսու յղում ենք նաեւ Մեր հայրական սէրը եւ օրհնութիւնը Սուրբ Աթոռիդ ուխտապան Միաբանութեան եւ համայն հաւասացեալ ժողովրդեան, հոգեւէն ու ազգանուէր գործոց լիակատար յաջողութեան մաղթանքով:

Շնորհաւորում ենք Ձեր Նոր Տարին եւ լուսաբաշխ ծնունդը մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի: Խաղաղութիւն ընդ Ձեզ:

«Այսուհետեւ արդարացեալ ի հաւատոց անտի, խաղաղութիւն կալցում առ Աստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Հռոմ. Ե, 1): Ամէն:

Եղբայրական սիրոյ ողջագոյրումով՝

Վ Ա Զ Գ Է Ն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

ԿԱՅՈՂՆԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ ԱՆԹԵԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Քիւ 528:85

Անթիլիաս, 18 Դեկտեմբեր 1985

Ամենապատիւ
Տ. Եղիշէ Արեւաթ. Տէրէրեան
Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի
Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

1985ի վերջին այս օրերուն եւ 1986ի հեռանկարին դիմաց, որքան
հաղորդ է Մեզ համար ողջունել Ձերդ Սիրեցեալ Եղբայրութիւնը եւ ի խորոց
արտի աղօթել առ Աստուած, որ Իր երկնային շնորհքին հառազայթումով երջա-
նիկ ընծայէ Ձեր կեանքն ու սպասաւորութիւնը որպէս Պատրիարք Երուսաղէմի:

Մօտ ասեցէն, 1986ի արեւոյտին, Քրիստոսի ծննդեան եւ Աստուածա-
յայտնութեան տօնին, Հայոց Եկեղեցւոյ բոլոր կոչնակները՝ պիտի ղողանջեն
արձագանգելով հրեշտակային մեղեդին, անգամ մը եւս աւեհելով ամբողջ աշ-
խարհին եւ ողջ հայութեան «ծնաւ ձեզ այսօր Փրկիչ», եւ հրաւիրելով բոլոր
մարդիկը փառաբանական ձայնիւ երգելու.

«Փառք ի բարձունս Աստուծոյ

եւ յերկիր խաղաղութիւն

ի մարդիկ հաճութիւն»:

Եւ արդարեւ որքան կարօտով, կարիքաւոր արժով աշխարհն ու հայու-
թիւնը պէտք ունին այս խաղաղութեան եւ հաճութեան, որոնք այնքան յաճախ
կը զլացուն մարդկային կեանքին՝ անձնական, կողմնակցական, մասնակի,
ժամանակաւոր շահերու եւ փառահռոյսներու, ոյժի եւ հեղինակութեան բխալ
հասկացողութեան որպէս հետեւանք:

Հայկական Եղեռնի Եօթանասունամեակին յաջորդող տարւան սեմին,
որպէս նուիրական ուխտ՝ մեր Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռները, բոլոր
թեմերը, թագային կազմակերպութիւնները եւ հաստատութիւնները պէտք է յա-
տուկ ջանքով լծուին հայ ժողովուրդի սիրտեան եւ համեմատելի գործունէութեան
համայնական եւ հրամայական առաքելութեան, որպէսզի առաւել եւս ծաղկի
եւ պսղաբերի հայ կեանքը որպէս աստուածահաճոյ եւ ազգաւոր կենսաբնօր
Աստուծոյ փառքին, մարդկութեան բարիքին եւ հայութեան ապագային ի խնդիր:

Ահա այս ապրումներով եւ այսպիսի մտածումներով կ'ողջունենք Ձեր
Սիրեցեալ Եղբայրութիւնը եւ կը մղտնայինք Ձեզի, Սրբոց Յակոբեանց Միաբա-
նութեան եւ համայն հաւատացեալ ժողովրդեան վերանորոգեալ կեանք՝ Քրիս-
տոսի մարդեղութեան խորհուրդովը վերակենսաւորելով:

Մնամք Եղբայրական սիրով

Աղօթակից

Կ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



LAMBETH PALACE, LONDON, SE1 7JU
CHRISTMAS 1985

His Beatitude Yeghishe Derderian,
Armenian Patriarch of Jerusalem.

Your Beatitude,

As Christians everywhere prepare to celebrate the mystery of the Incarnation of God in Jesus Christ, I send to you and to your Church my warm Christmas greetings.

Our belief that God became a human being so that men and women might share in the divine life is at the heart of our Christian faith. Jesus Christ, the Word of God made flesh, reveals in his living, dying and rising again both the boundless graciousness of God towards us, and the capacity of men and women for being renewed in the image of God by the grace of his Spirit.

It is that faith which sustains the Church in its mission, and which is the source of its hope in a world where the image of God is marred by sin, and where hate and division so often predominate over love and unity.

As we rejoice together in the celebration of Christ's coming, so are we joined in common prayer that God will unite all Christians in the Body of his Son, so that the Church may be a sign of hope and an instrument of God's peace in the world God creates in love and in Christ suffers to save.

Your Beatitude's Beloved Brother in Christ,
DR. ROBERT RUNCIE
Archbishop of Canterbury

Ամեն. Տ. եղիշէ Արքեպս. Տէրութեան
Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Սրտագին եւ անկեղծ զգացումներով է որ կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը Մեր Փրկչին երկրի վրայ երեւելուն մեծ եւ փառաւորեալ տօնին առիթով:

Աստուծոյ Որդին իջաւ երկրի վրայ եւ Ս. Հոգւոյն միջնորդութեամբ ծնաւ Ս. Կոյսէն, լուսաւորելու համար մեզ Աստուծոյ Յշմարիտ գիտութեան յոյսովը եւ մեզի Անոր ժառանգորդները դարձնելու համար (Եփես. Ա. 11): Այդպէսով յայտնուեցաւ Տիրոջ անսահման սէրը մարդկային ցեղին նկատմամբ, եւ վճռեց ճակատագիրը մարդ արարածին՝ զոր ստեղծած էր ինքնիշխան կամբով:

Ժամանակի մը մէջ, ուր աշխարհը լեցուած է մտահոգիչ երեւոյթներով եւ կեանքի սրբազան պարգեւը սպառնալիքին տակ է խորտակման եւ քնաջնջման, կը հայցենք նորածին Երկնաւոր Մանուկէն որ Իր հօտին եւ բոլոր ժողովուրդներուն պարգեւէ արդար եւ տեւական խաղաղութիւնը զոր հրեշտակները աւետեցին Մենդեան գիշերին ի Լեթդիէնէմ:

Ջերմօրէն կ'աղօթենք կենսապարգեւ Քրիստոսի, որ օրհնէ մեզ ու պահէ խաղաղ ու բարգաւաճ, որպէսզի երկրի վրայ ամէն ոք կարենայ ապրիլ սիրոյ ու ճշմարտութեան մէջ (Յովհ. Բ. 29), Տիրոջը փառքին եւ յայրկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն (Ղկս. Բ. 14) երկնառաք պատգամին ու աւետիսին շուտափոյթ իրականացման համար:

Նղբայրական սիրով ի Քրիստոս՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Մնունդ 1985/86 — Մոսկուա

ՕՐԹՈՏՈՐՔՍ ԵԿԵՂԵՑԻ ՓՕՐԹՈՒԿԱՆԻ ԵՒ ՍՊԱՆԻՈՑ

ԼԻԶՊՈՆԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ

Ամենապատիւ Տ. Նիդէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Ձերդ Ամենապատուութիւն,

Մարմնացեալ Բանի Մենդեան կանխատեսուած ուրախութեամբ կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը եւ կը խնդրենք Քրիստոսէ, որ մեր զօրութիւնն ու փրկութիւնն է միանգամայն, որ շնորհէ Ձեզ առողջ եւ երկար կեանք, եւ Ձեր Սուրբ Եկեղեցիին՝ սէր եւ խաղաղութիւն:

Կ'օգտուինք այս առիթէն, Ձեզ կը վստահեցնենք մեր խոնարհ աղօթքները, վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ սիրոյ եւ համերաշխ գոյակցութեան եւ գործակցութեան Քրիստոնեայ Եկեղեցիներու:

ԿԱՊՐԻԷԼ ԱՐԲԵՊՍ.

Սպանիոյ Մետրապոլիտ

Ս. Մնունդ, 1986